

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Բնաստիտուտ ՍՊԸ-ի ղեկավարությունը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Բնաստիտուտ ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի

Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններին օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք դեկլարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև

Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Ղի-Օ Արմենիա» ՓԲԸ



30 հունիս, 2024թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Դավիթ Եղիզարյան, FCCA
Աուդիտի գործընկեր

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՄՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	4,766,191	4,947,126
Ոչ նյութական ակտիվներ		16,858	20,578
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	6	61,443	59,943
Տրված փոխառություններ	7	187,854	187,854
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	8	75,674	87,508
Անշարժ գույքի ձեռքբերման իրավունք	23	201,823	201,823
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով		56,190	28,813
Հետաձգված հարկային ակտիվ	17	70,144	57,412
		5,436,177	5,591,057
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	721,295	902,923
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	245,969	297,590
Տրված փոխառություններ	7	45,628	33,510
Ավանդներ	11	359,148	247,443
Դրամական միջոցներ	12	666,475	791,663
		2,038,515	2,273,129
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		7,474,692	7,864,186
Մեփական կապիտալ	13		
Կանոնադրական կապիտալ		4,072,946	3,979,983
Հետգնված կապիտալ		(87,476)	(161,384)
Կուտակված շահույթ		1,630,036	1,619,862
		5,615,506	5,438,461
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	14	266,023	345,682
Վարձակալության գծով պարտավորություն	8	47,703	58,599
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	679,073	920,038
		992,799	1,324,319
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	14	111,475	99,824
Վարձակալության գծով պարտավորություն	8	20,281	15,512
Եկամուտներին վերաբերող շնորհներ	15	213,846	425,550
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	520,785	560,520
		866,387	1,101,406
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		7,474,692	7,864,186

Ֆինանսական հաշվետվությունները և կից ծանոթագրությունների ներկայացված 11-ից 38 էջերում հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Հասույթ	18	5,559,025	5,419,000
Ինքնարժեք	19	(5,704,931)	(5,753,643)
Համախառն շահույթ		(145,906)	(334,643)
Վարչական ծախսեր	19	(704,417)	(591,766)
Այլ եկամուտ	20	1,162,167	1,416,133
Այլ ծախսեր	19	(61,803)	(135,430)
Գործառնական շահույթ		250,041	354,294
Ֆինանսական եկամուտ	21	32,324	20,476
Ֆինանսական ծախսեր	21	(50,880)	(60,092)
Այլ օգուտ, զուտ		12,883	30,519
Շահույթ մինչև հարկումը		244,368	345,197
Շահութահարկի գծով ծախս	17	(43,085)	(63,185)
Տարվա զուտ շահույթ		201,283	282,012
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		201,283	282,012

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՄՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	5,516,173	5,568,580
Նվիրատվությունից մուտքեր	21,469	40,189
Վարձավճարներից մուտքեր	39,718	39,315
Այլ մուտքեր	25,929	19,536
	5,603,289	5,667,620
Վճարումներ աշխատավարձի գծով	(2,592,431)	(2,363,590)
Նյութերի և դեղերի գծով վճարումներ	(1,098,183)	(1,282,868)
Ծառայությունների գծով վճարումներ	(595,389)	(481,544)
Վճարված շահութահարկ	(55,817)	(188,382)
Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	(741,982)	(860,415)
Այլ ելքեր	(98,659)	(30,275)
	(5,182,461)	(5,207,074)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	420,828	460,546
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Տրամադրված փոխառություններից մուտքեր	4,069	22,040
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	-	42,480
Ներդրված ավանդների վերադարձից մուտքեր	200,000	-
Ստացված տոկոսներ	20,619	16,585
	224,688	81,105
Փոխառությունների տրամադրումից ելքեր	(18,275)	(27,238)
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով վճարումներ	(247,241)	(459,736)
Այլ կազմակերպություններում ներդրումներից ելքեր	(1,500)	(24,900)
Ներդրված ավանդներից ելքեր	(300,000)	-
	(567,016)	(511,874)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	(342,328)	(430,769)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնեմասի տեղաբաշխումից մուտքեր	22,798	-
Փոխառությունների ստացումից մուտքեր	11,592	-
Վարկի ստացում	80,780	-
	115,170	-
Վարկի մարում	(148,789)	(88,506)
Վարկի տոկոսների մարում	(42,434)	(49,047)
Փոխառությունների մարում	(12,069)	-
Վարձակալական պարտավորության գծով ելքեր	(15,933)	(46,380)
Վարձակալական պարտավորության տոկոսի մարում	(8,446)	(11,045)
Բաժնեմասի հետգնում	(73,907)	-
Շահաբաժինների վճարումներ	(19,082)	(65,567)
	(320,660)	(260,545)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(205,490)	(260,545)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(126,990)	(230,768)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	1,802	(30,427)
Դրամական միջոցներ տարեկզբի դրությամբ	791,663	1,052,858
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	666,475	791,663

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	Կանոնա դրական կապիտալ	Հետգնված կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
		հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.		3,979,983	(161,384)	1,619,862	5,438,461
Տարվա շահույթ		-	-	201,283	201,283
Շահաբաժիններ	12.2	-	-	(98,146)	(98,146)
Կանոնադրական կապիտալի ավելացում		92,963	-	(92,963)	-
Կանոնադրական կապիտալի նվազեցում		-	-	-	-
Բաժնեմասի հետգնում		-	73,908	-	73,908
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.		4,072,946	(87,476)	1,630,036	5,615,506
Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.		3,566,112	(287,185)	2,051,430	5,330,357
Տարվա շահույթ		-	-	282,012	282,012
Շահաբաժիններ		-	-	(100,000)	(100,000)
Կանոնադրական կապիտալի ավելացում		613,580	-	(613,580)	-
Կանոնադրական կապիտալի նվազեցում		(199,709)	199,709	-	-
Հետգնված բաժնեմասի վաճառք		-	(73,908)	-	(73,908)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.		3,979,983	(161,384)	1,619,862	5,438,461

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ	11
2. Պատրաստման հիմունքներ	12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ.....	13
4. Ֆինանսական գործիքներ	14
5. Հիմնական միջոցներ.....	19
6. Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ.....	20
7. Տրված փոխառություններ	20
8. Ֆինանսական վարձակալություն.....	20
9. Պաշարներ	21
10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	21
11. Ավանդներ.....	22
12. Դրամական միջոցներ.....	23
13. Կանոնադրական կապիտալ	23
14. Վարկեր	24
15. Շնորհ	25
16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.....	25
17. Շահութահարկ	26
18. Հասույթ.....	27
19. Ծախսերը ըստ բնույթի.....	28
20. Այլ եկամուտ	29
21. Ֆինանսական եկամուտ և ծախսեր.....	29
22. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում	30
23. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր.....	30
24. Պայմանական դեպքեր	31
25. Գործարքներ կապակցված կողմերի հետ	32
26. Իրական արժեքի չափման բացահայտումներ	34
27. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ.....	34

1. Ընդհանուր տեղեկություններ

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) հանդիսանում է վերանվանված «Արաբկիր» բժշկական համալիր ՍՊԸ-ի իրավահաջորդը:

21.01.2004թ. ընդհանուր ժողովի որոշման հիման վրա «Արաբկիր» բժշկական համալիր ՍՊԸ-ն վերանվանվել է «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ-ի:

«Արաբկիր» բժշկական համալիր ՍՊԸ-ն ստեղծվել է ՀՀ Կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի «Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի վերակազմակերպելու մասին թիվ 1536-Ն և «Արաբկիր բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի մասնակիցների 2003թ. հունվարի 27-ին կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշումների համաձայն՝ «ՀՀ առողջապահության նախարարության Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ն (գրանցման թիվ՝ 264.140.00128, պետական գրանցման վկայական՝ 01 Ա 001156) «Արաբկիր բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին միացնելու ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

31.12.2023թ. դրությամբ Ընկերության մասնակիցներն են.

Հ/Հ	Մասնակցի անունը, ազգանունը (անվանումը)	բաժնեմասը (դրամ)	բաժնեմասի չափը
1	«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ	1,760,897,146	43.23%
2	Մանուշակ Երիցյան	692,456,697	17.00%
3	Սերգեյ Բաբոյան	511,426,565	12.55%
4	Արման Բաբոյան	511,426,565	12.55%
5	«ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»	100,082,217	2.45%
6	Աշոտ Սարգսյան	89,987,803	2.20%
7	Նինա Արիկյանց	87,406,294	2.14%
8	Գայանե Հենրիկի Ազատյան	81,529,591	2.00%
9	Մարինա Փափազյան	71,947,128	1.76%
10	Սահակ Առաքելյան	48,525,830	1.19%
11	Կարապետ Շաքարյան	47,252,374	1.16%
12	Կարլեն Ղուշյան	38,128,502	0.93%
13	Խաչատուր Քյուրքչյան	19,337,210	0.47%
14	Բիայնա Սուխուդյան	6,949,991	0.17%
15	Աստղիկ Բաղդասարյան	5,711,058	0.14%
	Ընդամենը	4,073,064,971	100%

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության կազմակերպումը, հիվանդանոցային և արտահիվանդանոցային (ամբուլատոր) գործունեությունը, այդ թվում՝

- մարդու առողջության պահպանմանը, հիվանդությունների հայտնաբերմանը, կանխարգելմանն ու բուժմանն ուղղված գործունեության իրականացում,
- երեխաների, դեռահասների և երիտասարդների հիվանդությունների հայտնաբերմանն ու բուժմանն ուղղված գործունեության իրականացում,
- բնակչության ֆիզիկական, մտավոր, լսողական, հոգեբանական և սոցիալական վերականգնողական գործունեության իրականացում,

- երեխաների և դեռահասների առողջության պահպանմանը, հիվանդությունների հայտնաբերմանը և բուժմանն ուղղված կազմակերպչամեթոդական ու գիտահետազոտական գործունեության իրականացում,
- ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի սահմաններում անհրաժեշտ ամբուլատոր և ստացիոնար բժշկական օգնության իրականացում իրեն պատկանող կառույցներում ու ստորաբաժանումներում,
- առողջապահական ժամանակակից մոտեցումների, ուղեցույցների, ստանդարտների, բուժական, ախտորոշիչ մեթոդների մշակում, ուսուցում և ներդրում ինչպես իր կողմից ստեղծված ստորաբաժանումներում, այնպես էլ այլ առողջապահական և բժշկական հաստատություններում,
- պաթոմորֆոլոգիական ախտորոշիչ ծառայություն՝
 - հիվանդությունների ճշտված ախտորոշումը՝ սեկցիոն (աուտոպսիոն), վիրահատական և բիոպսիոն նյութի հետազոտման միջոցով,
 - բուժող բժիշկների հետ ախտորոշիչ և բուժական աշխատանքի վերլուծում,
 - կլինիկաախտաբանական կոնֆերանսների կազմակերպում,
 - հայտնաբերված սուր վարակիչ և հատուկ վտանգավոր հիվանդությունների մասին առողջապահության մարմիններին շտապ տեղեկացում:

Ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 30:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Արցախի Հանրապետությունում պատերազմը և վիճարկելի տարածքների շուրջ ընթացող քաղաքական զարգացումները զգալի ազդեցություն են ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Ներկայիս փուլը կարելի է բնութագրել որպես կայուն վերականգնման ժամանակաշրջան:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանախատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 27-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Շափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը 2023 թվականի հունվարի 1-ից իր տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտներն ու փոփոխությունները

- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ Գործնական Հայտարարության 2 փոփոխություն)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ)

Հրապարակված ՀՀՄՍ-ներ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների որոշակի փոփոխությունները, որոնք պարտադիր չեն 2023 թվականի դեկտեմբերի 31-ի հաշվետու ժամանակաշրջանների համար Ընկերության կողմից վաղաժամկետ չեն ընդունվել: Ակնկալվում է, որ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության վրա ընթացիկ կամ ապագա հաշվետու ժամանակաշրջաններում:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է (ի տարբերություն դրա գոյատևման ժամկետի): Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն: Եթե հիմնական միջոցների

փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

Առևտրային դերիտորական պարտքերի վճարունակության ակնկալվող կորուստներ - ծնթ. 10

Դերիտորական պարտքի ակնկալվող կորստի պահուստի դրույքները որոշվել են՝ հաշվի առնելով Ընկերության նախորդ տարիների կորստի վիճակագրությունը և հաճախորդների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները: Առևտրային դերիտորական պարտքերը գնահատվել են՝ ըստ նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չձգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ գեղչման ազդեցությունը աննշան է:

4. Ֆինանսական գործիքներ

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Տրված փոխառություններ,
- Դրամական միջոցներ,
- Ավանդներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,
- Վարկեր,
- Վարձակալության գծով պարտավորություն

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	207,366	163,548
Տրված փոխառություններ	233,482	221,364
Ավանդներ	359,148	247,443
Դրամական միջոցներ	666,475	791,663
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,466,471	1,424,018

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Վարկեր	377,498	445,507
Վարձակալության գծով պարտավորություն	67,984	74,111
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	182,414	212,396
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	627,896	732,014

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարկերը և վարձակալության գծով պարտավորությունը:

Դրամական միջոցների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի, տրված փոխառությունների, վարկերի և վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 26-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքի որոշման հետ կապված

նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը ներկայացնում է բուժօգնությունների դիմաց ստացվելիք գումարները՝ հիմնականում Պետական առողջապահական գործակալությունից ստացվելիք գումարները: Ընկերությունը դեբիտորական պարտքի գծով երաշխիք չի պահանջում:

Ընկերությունը որոշում է պարտքային ռիսկի կոնցենտրացիան՝ ամսական կտրվածքով անցկացնելով առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծություն:

Առևտրային դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 10-ում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից: Ընկերությունը չունի ստացված փոխառություններ՝ փոփոխական տոկոսադրույքով:

Արտարժույթային ռիսկ

Արժույթային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժույթային ռիսկին Ընկերության հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքների, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին ներկայացված է ստորև

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Զուտ արտարժույթային ֆինանսական ակտիվներ		
ԱՄՆ դոլար	101,703	138,271
Ընդամենը գուտ ենթարկվածություն	<u>101,703</u>	<u>138,271</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 5% արժևորումը (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնեք տարվա արդյունքի և գուտ ակտիվների ավելացմանը՝ 5,085

«ԱՐԱՐԱՏ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

հազար դրամի չափով (2022թ.՝ 6,914 հազար դրամի չափով), իսկ 5% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա արդյունքի և գուտ ակտիվների նվազմանը՝ նույն չափով:

Այլ գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային և արժույթային ռիսկերից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց ընթացիկ արժեքից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավելի հազ. դրամ
Վարկեր	35,776	107,329	143,104	149,463	8,683
Վարձակալության գծով պարտավորություն Առևտրային	6,710	20,087	26,669	27,249	-
կրեդիտորական պարտքեր	182,414	-	-	-	-
Ընդամենը	224,900	127,416	169,773	176,712	8,683
Առ 31-ը դեկտեմբերի 2022թ.	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավելի հազ. դրամ
Վարկեր	34,388	103,165	137,553	248,264	17,935
Վարձակալության գծով պարտավորություն Առևտրային	5,910	17,731	23,642	47,284	0
կրեդիտորական պարտքեր	131,444	-	-	-	-
Ընդամենը	171,742	120,896	161,195	295,548	17,935

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և մասնակիցների շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը):

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
 Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերության որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	2023թ. հազ. դրամ (445,482)	2022թ. հազ. դրամ (519,617)
Փոխառություններ/վարկեր		
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	666,475	791,663
Զուտ պարտք	220,993	272,046
Ընդամենը սեփական կապիտալ	5,615,506	5,438,460

5. Հիմնական միջոցներ

Մեղմանական արժեք	Հոդ	Շենքեր	Բժշկական սարքավորումներ և գործիքներ	Տրանսպորտային միջոցներ	Կահույք և սարքավորումներ	Վարձակալված ՀՄ-ի վրա կատարված ծախսեր	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	Ընդամենը
		հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
<i>Մեղմանական արժեք</i>								
Առ 1-ը հունվարի 2022թ.	1,579,323	4,547,620	2,455,606	162,014	1,203,323	22,308	634,450	10,604,644
Ավելացումներ	-	289,283	149,084	13,666	65,724	-	94,687	612,444
Նվազեցումներ	-	(37,580)	(9,891)	(11,627)	(10,393)	-	(285,135)	(354,626)
վերադասակարգում ՕԻԱ-ից	-	-	130,036	22,000	-	-	-	152,036
Այլ վերադասակարգումներ	-	(16,698)	29,237	18,344	(8,575)	(22,308)	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	1,579,323	4,782,625	2,754,072	204,397	1,250,079	-	444,002	11,014,498
Առ 1-ը հունվարի 2023թ.	1,579,323	4,782,625	2,754,072	204,397	1,250,079	-	444,002	11,014,498
Ավելացումներ	-	13,525	84,770	127,895	85,227	-	96,734	408,151
Նվազեցումներ	-	-	(5,452)	(58,500)	(31,940)	-	-	(95,892)
Այլ վերադասակարգումներ	-	538,786	-	-	-	-	(538,786)	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,579,323	5,334,936	2,833,390	273,792	1,303,366	-	1,950	11,326,757
<i>Կուտակված մաշվածություն</i>								
Առ 1-ը հունվարի 2022թ.	-	2,471,954	1,955,052	121,509	904,388	22,308	-	5,475,211
Ավելացումներ	-	209,893	206,019	29,908	102,238	-	-	548,058
Նվազեցումներ	-	(15,167)	(9,828)	(11,627)	(10,324)	-	-	(46,946)
վերադասակարգում ՕԻԱ-ից	-	-	79,000	12,049	-	-	-	91,049
Այլ վերադասակարգումներ	-	(15,029)	28,816	3,665	4,856	(22,308)	-	-
Առ 31-ը դեկտեմբերի 2022թ.	-	2,651,651	2,259,059	155,504	1,001,158	-	-	6,067,372
Առ 1-ը հունվարի 2023թ.	-	2,651,651	2,259,059	155,504	1,001,158	-	-	6,067,372
Ավելացումներ	-	218,799	217,471	30,201	103,816	-	-	570,287
Նվազեցումներ	-	-	(5,438)	(40,061)	(31,594)	-	-	(77,093)
Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.	-	2,870,450	2,471,092	145,644	1,073,380	-	-	6,560,566
<i>Զուտ հաշվեկշռային արժեք</i>								
Առ 1-ը հունվարի 2021թ.	1,579,323	2,075,666	500,554	40,505	298,935	-	634,450	5,129,433
Առ 31-ը դեկտեմբերի 2022թ.	1,579,323	2,130,974	495,013	48,893	248,921	-	444,002	4,947,126
Առ 31-ը դեկտեմբերի 2023թ.	1,579,323	2,464,486	362,298	128,148	229,986	-	1,950	4,766,191

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունում լրիվ մաշված հիմնական միջոցների արժեքը 2,712,577 հազար դրամ է (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,538,847 հազար դրամ է):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունեցել է 1,628 մլն դրամ հաշվեկշռային արժեքով գրավադրված հիմնական միջոցներ: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունեցել է 1,628 մլն դրամ արժեքով գրավադրված հիմնական միջոցներ:

6. Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ

Ընկերությունը ունի 59,943 հազար դրամի չափով ներդրում ասոցիացված ընկերությունների կանոնադրական կապիտալներում, որից 35,043 հազար դրամը վճարված չէ:

2023թ.-ին Ընկերությունը ձեռք է բերել 100% բաժնեմաս կազմակերպությունում, որը հաշվառել է բաժնեմասնակցության մեթոդով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս գործունեություն չի ծավալում և ունի ոչ էական ակտիվների և պարտավորությունների մնացորդներ:

		2023թ.		2022թ.
	Բաժնեմաս	հազ. դրամ	Բաժնեմաս	հազ. դրամ
Ընկերություն 1	20%	50,000	20%	50,000
Ընկերություն 2	30%	9,930	30%	9,930
Ընկերություն 3	100%	1,500	-	-
Ընկերություն 4	25%	13	25%	13
		<u>61,443</u>		<u>59,943</u>

7. Տրված փոխառություններ

	2023թ.	2022թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ոչ ընթացիկ		
Երկարաժամկետ փոխառություն		
տրամադրված ասոցիացված ընկերությանը	199,565	199,565
Անհավաքելիության գծով պահուստ	(11,711)	(11,711)
	<u>187,854</u>	<u>187,854</u>
Ընթացիկ		
Կարճաժամկետ փոխառություններ		
փոխկապակցված անձանց	23,335	23,335
Այլ կարճաժամկետ փոխառություններ	22,293	10,175
	<u>45,628</u>	<u>33,510</u>

8. Ֆինանսական վարձակալություն

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ

	Մարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Առ 01.01.2022	110,200	10,083	-	120,283
Ամորտիզացիա	(22,692)	(133)	-	(22,825)
Օգտագործման իրավունքի կիրառում	-	(9,950)	-	(9,950)
Առ 01.01.2023	<u>87,508</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>87,508</u>

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ավելացում	-	-	10,896	10,896
Ամորտիզացիա	(22,730)	-	(690)	(22,730)
Առ 31.12.2023	65,468	-	10,206	75,674

Վարձակալության գծով պարտավորություն

	Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Առ 01.01.2022	109,320	9,077	-	118,397
Տոկոսային ծախս	10,953	92	-	11,045
Վճարումներ	(45,393)	(9,938)	-	(55,331)
Մնացորդի ուղղում	(769)	769	-	-
Առ 01.01.2023	74,111	-	-	74,111
Ձեռքբերում	-	-	9,806	9,806
Տոկոսային ծախս	8,409	-	37	8,446
Վճարումներ	(23,641)	-	(738)	(24,379)
Առ 31.12.2023	58,879	-	9,105	67,984

9. Պաշարներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Բժշկական նյութեր և պարագաներ	610,201	775,782
Ձեռքբերված դեղորայք	57,174	63,710
Անհատույց ստացված դեղորայք	30,794	38,844
Այլ	23,126	24,587
	721,295	902,923

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր		
բժշկական ծառայությունների գծով		
- պետական պատվերի հիմունքով	175,768	137,086
- վճարովի հիմունքով	26,287	26,482
Գործառնական վարձակալության գծով	12,041	11,495
Այլ	5,342	557
Անհավաքելիության գծով պահուստ (զ)	(12,072)	(12,072)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	207,366	163,548
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով	207,366	163,548
Ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	37,326	129,066
Հարկերի գծով	100	2,069
Այլ	1,177	2,907
	245,969	297,590

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ա) Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

բ) Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են՝ որպես նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության: Ակնկալվող կորստի դրույքները հիմնված են Ընկերության նախորդ տարվա կորուստների վիճակագրության վրա: Կորուստների պատմական դրույթը ճշգրտվել է հաշվի առնելով Ընկերության գործընկերների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները:

գ) 31.12.2023թ.-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատումը հետևյալն է.

2023 հազ. դրամ	Ընթացիկ	Մինչև 30 օր ժամկետանց	31-90 օր ժամկետանց	91 օրից ավելի ժամկետանց	Ընդամենը
Վճարունակության ակնկալվող կորստի դրույթ (%)	0.92	2.23	9.37	20.00	-
Ընդամենը ընթացիկ արժեք	200,397	4,661	1,404	3,722	210,184
Կորստի գումար	1,838	104	132	744	2,818

2022 հազ. դրամ	Ընթացիկ	Մինչև 30 օր ժամկետանց	31-90 օր ժամկետանց	91 օրից ավելի ժամկետանց	Ընդամենը
Վճարունակության ակնկալվող կորստի դրույթ (%)	1.41%	2.29%	9.83%	53.70%	
Ընդամենը ընթացիկ արժեք	156,022	4,255	3,851	4,516	168,644
Կորստի գումար	2,195	97	378	2,425	5,096

31.12.2023թ.-ի դրությամբ 9,254 հազար դրամ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ողջ ժամկետի համար գնահատված վճարունակության կորստի գումարը հավասար էր դեբիտորական պարտքի արժեքին: Ղեկավարության դիտարկմամբ նշված դեբիտորական պարտքի արժեքից հիմնական հայտանիշը այն է, որ հաճախորդները քիչ հավանական է որ կվճարեն նշված պարտքերը որոշակի ժամկետի ընթացքում: Արժեքը կվճարված դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը ներկայացված է ներքո.

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
12 ամիս և ավելի	9,254	6,976
	<u>9,254</u>	<u>6,976</u>

11. Ավանդներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Դրամային ավանդներ	344,915	240,000
Հաշվեգրված տոկոսներ	14,233	7,443
	<u>359,148</u>	<u>247,443</u>

«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԻՐ - ԵՐԵՎԱՆԵՐԻ և ԴԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻԽՈՒՄ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ժամանակաշրջանի վերջին մնացորդ ունեցող ավանդների պայմանները հետևյալն են.

	Արժույթ	Տոկոսա դրույթ	Մարման ժամկետ	2023թ.		2022թ.	
				Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
Բանկ 1	ՀՀԴ	9.25%	04.10.24	40,000	-	40,000	4,654
Բանկ 2	ՀՀԴ	9.00%	16.08.24	100,000	3,591	100,000	1,653
Բանկ 2	ՀՀԴ	6.60%	06.04.22	-	-	100,000	1,136
Բանկ 3	ՀՀԴ	9.75%	01.03.24	104,915	3,345	-	-
Բանկ 3	ՀՀԴ	10.25%	21.10.24	50,000	3,630	-	-
Բանկ 4	ՀՀԴ	10.00%	14.10.24	50,000	3,667	-	-
				344,915	14,233	240,000	7,443

12. Դրամական միջոցներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Հաշվարկային հաշիվներում (ՀՀ դրամով)	561,600	646,148
Հաշվարկային հաշիվներում (արտարժույթով)	101,760	138,273
Դրամարկդում	3,115	7,242
	666,475	791,663

Դրամական միջոցները պահվում են ՀՀ վստահելի առևտրային բանկերում:

13. Կանոնադրական կապիտալ

13.1 Կանոնադրական կապիտալ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության թողարկված տեղաբաշխված բաժնեմասերի արժեքը կազմում է 4,073,065 հազար դրամ (2022թ.՝ 3,980,102 հազար դրամ): Դեռևս չվճարված կապիտալը կազմում է 119 հազար դրամ (2022թ.՝ 119 հազար դրամ):

31.12.2023թ. դրությամբ Ընկերության մասնակիցների թիվը կազմում է 15 անձ/կազմակերպություն (31.12.2022թ. դրությամբ՝ 17):

13.2 Շահաբաժիններ

28.06.2023թ. մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ 2022թ. ֆինանսական արդյունքներով Ընկերության մասնակիցներին հայտարարվել է 191,109 հազար դրամի շահաբաժիններ (2022թ.-ին 713,580 հազար դրամ), որոնցից 92,963 հազար ՀՀ դրամը վերաներդրվել է կապիտալում (2022թ.-ին 613,580 հազար դրամ), 98,146 հազար ՀՀ դրամը բաշխել մասնակիցների միջև (2022թ.-ին 100,000 հազար դրամ):

13.3 Հետգնված բաժնեմաս

Ընկերության հետ գնված բաժնեմասը ամբողջությամբ 73,908 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով ձեռք է բերվել Ընկերության մասնակիցների կողմից նախապատվության իրավունքով:

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

14. Վարկեր

Ստորև ներկայացված են վարկերի հաշվեկշռային և իրական արժեքները.

	Հաշվեկշռային արժեք 2023թ. հազ. դրամ	Իրական արժեք 2023թ. հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք 2022թ. հազ. դրամ	Իրական արժեք 2022թ. հազ. դրամ
Ոչ ընթացիկ վարկեր				
-Գրավով ապահովված	266,023	266,023	345,683	345,683
	<u>266,023</u>	<u>266,023</u>	<u>345,683</u>	<u>345,683</u>
Ընթացիկ վարկեր				
-Գրավով ապահովված	111,475	111,475	99,824	99,824
	<u>111,475</u>	<u>111,475</u>	<u>99,824</u>	<u>99,824</u>
Ընդամենը վարկեր	<u>377,498</u>	<u>377,498</u>	<u>445,507</u>	<u>445,507</u>

Վարկերը ստացվել են հիմնական միջոցներ ձեռք բերելու և կապիտալ շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով:

Ընկերությունը 06/09/2021թ. մինչև 5 մլրդ ՀՀ դրամ սահմանաչափով գլխավոր վարկային պայմանագիր է կնքել ՀՀ բանկերից մեկի հետ, հետագայում դրա ներքո հաջորդական վարկեր, վարկային գծեր և այլ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր կնքելու և վարկային միջոցներ ստանալու նպատակով: Որպես վերոնշյալ պայմանագրի ապահովման միջոց է առաջադրել ՀՀ, ք. Երևան, Փափագյան փ. թիվ 32 հասցեում գտնվող անշարժ գույքը (տես ծնթ. 5): 06/09/2021թ. Ընկերությունը կնքել է ենթավարկային պայմանագիր և ստացել է 480 մլն դրամի վարկ 10% տոկոսադրույքով: Նույն գլխավոր պայմանագրի ներքո Ընկերությունը 2023թ. -ին կնքել է 2 նոր ենթավարկային պայմանագրեր 4,600 և 31,800 հազար ՀՀ դրամ գումարով 12% տոկոսադրույքով:

Ժամանակաշրջանի վերջին մնացորդ ունեցող վարկերի պայմանները հետևյալն են.

	Արժույթ	%	Մարման տարի	2023թ.		2022թ.	
				Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք
Ապահովված բանկային վարկ	ՀՀԴ	10.00%	2026	294,428	294,428	382,580	382,580
Ապահովված բանկային վարկ	ՀՀԴ	7.50%	2029	47,737	47,737	54,142	54,142
Ապահովված բանկային վարկ	ՀՀԴ	14.50%	2025	-	-	8,785	8,785
Ապահովված բանկային վարկ	ՀՀԴ	12.00%	2028	30,769	30,769	-	-
Ապահովված բանկային վարկ	ՀՀԴ	12.00%	2029	4,564	4,564	-	-
				<u>377,498</u>	<u>377,498</u>	<u>445,507</u>	<u>445,507</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ գործող վարկերի հիմնական մասը ապահովված է նաև բաժնետերերի երաշխավորությամբ:

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

15. Շնորհ

15.1 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	920,038	1,152,187
Ստացում	25,000	83,044
Շնորհից եկամտի ճանաչում	(265,965)	(315,193)
Տարեվերջի մնացորդ	<u>679,073</u>	<u>920,038</u>
	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
ԱՐԱԲԿԻՐ միացյալ մանկական բարեգործական հիմնադրամից ստացված հիմնական միջոցներ	17,642	23,997
Այլ	7,358	59,047
	<u>25,000</u>	<u>83,044</u>

15.2 Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	425,550	235,899
Ստացում	609,983	1,214,125
Շնորհից եկամտի ճանաչում	(821,687)	(1,024,474)
Տարեվերջի մնացորդ	<u>213,846</u>	<u>425,550</u>

16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր		
Ապրանքների գծով	73,266	71,614
Ծառայությունների գծով	45,420	29,116
Հետգնված բաժնետոմսերի գծով	28,600	73,907
Այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումների գծով	35,043	35,043
ՀՄ-ների ձեռքբերման գծով	85	2,716
	<u>182,414</u>	<u>212,396</u>
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների	182,414	212,396
Զօգտագործված արձակուրդային պահուստ	206,118	196,328
Աշխատավարձի գծով	75,789	81,480
Հարկերի գծով	17,323	31,462
Շահաբաժինների գծով	-	3,338
Այլ	39,141	35,516
	<u>520,785</u>	<u>560,520</u>

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

17. Շահութահարկ

Հաշվետու տարվա համար ՀՀ «Հարկային օրենսգրքի» համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2021թ.-18%):

17.1. Շահութահարկի գծով ծախս

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով	55,817	69,586
Հետաձգված հարկի գծով եկամուտ	(12,732)	(6,401)
	<u>43,085</u>	<u>63,185</u>

17.2. Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2023թ. հազ. դրամ	%	2022թ. հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը ըստ ՖՀՄՄ-ների	<u>244,368</u>		<u>345,197</u>	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	43,986	18.00%	62,135	18.00%
Այլ չնվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների հարկային) հետևանք	(901)	(0.37)%	1,050	0.30%
Շահութահարկի գծով ծախսը և հարկի արդյունավետ դրույքը	<u>43,085</u>	<u>17.63%</u>	<u>63,185</u>	<u>18.30%</u>

17.3. Հետաձգված հարկային ակտիվ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	57,412	51,011
Տարվա եկամուտ	12,732	6,401
Տարեվերջի մնացորդ	<u>70,144</u>	<u>57,412</u>

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	Ակտիվներ 2023թ. հազ. դրամ	Պարտավորություններ 2023թ. հազ. դրամ	Զուտ 2023թ. հազ. դրամ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին 2023թ. հազ. դրամ
Արձակուրդայինի պահուստ	37,101	-	37,101	1,762
Հիմնական միջոցների գծով	26,245	-	26,245	4,172
Դեբիտորական պարտքերի գծով	3,398	-	3,398	3,398
Տրված փոխառությունների գծով	2,108	-	2,108	2,108
Պաշարների արժեզրկման գծով	1,292	-	1,292	1,292
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	<u>70,144</u>	<u>-</u>	<u>70,144</u>	<u>12,732</u>

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2022թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Արձակուրդայինի պահուստ	35,339	-	35,339	1,746
Հիմնական միջոցների գծով	22,073	-	22,073	4,655
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	57,412	-	57,412	6,401

18. Հասույթ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Պետական պատվերով բժշկական ծառայությունների գծով	3,910,703	3,944,079
Վճարովի բժշկական ծառայությունների գծով	1,648,322	1,474,921
	<u>5,559,025</u>	<u>5,419,000</u>

19. Ծախսերը ըստ բնույթի

	Ընդամենը		Բնքնաբժեք		Վարչական ծախսեր		Այլ ծախսեր	
	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Աշխատակիցների հատուցում	3,326,247	3,090,466	2,838,541	2,702,725	487,706	387,741	-	-
Դեղորայք և նյութեր	1,990,775	2,190,090	1,990,775	2,190,090	-	-	-	-
Մաշվածություն և ամորտիզացիա	596,738	600,611	596,738	600,611	-	-	-	-
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	170,435	141,142	144,870	123,429	25,565	17,713	-	-
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	77,536	88,349	77,536	88,349	-	-	-	-
Բանկային և ապահովագրական ծախսեր	64,899	54,599	-	-	64,899	54,599	-	-
Ծրագրերի սպասարկման ծախսեր	29,198	29,050	-	-	29,198	29,050	-	-
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	15,764	12,907	-	-	15,764	12,907	-	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	11,405	10,212	-	-	11,405	10,212	-	-
Այլ	188,154	263,413	56,471	48,439	69,880	79,544	61,803	135,430
	<u>6,471,151</u>	<u>6,480,839</u>	<u>5,704,931</u>	<u>5,753,643</u>	<u>704,417</u>	<u>591,766</u>	<u>61,803</u>	<u>135,430</u>

«ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

20. Այլ եկամուտ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Անհատույց ստացված ակտիվներից	1,108,540	1,367,297
Վարձակալությունից	32,326	32,839
Այլ	21,301	15,997
	<u>1,162,167</u>	<u>1,416,133</u>

21. Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներից և ավանդներից տոկոսային եկամուտ	32,324	20,476
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	<u>32,324</u>	<u>20,476</u>
Վարկի գծով տոկոսային ծախսեր	(42,434)	(49,047)
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	(8,446)	(11,045)
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	<u>(50,880)</u>	<u>(60,092)</u>
Զուտ ֆինանսական ծախս	<u>(18,556)</u>	<u>(39,616)</u>

22. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

հազ. դրամ	Վարձակալության գծով պարտավորություն	Ստացված վարկեր	Ընդամենը
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	118,397	534,013	652,410
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների ավելացումներ (կանխիկ դրամական հոսքեր)	-	-	-
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների ավելացումներ (անկանխիկ)	2,094	-	2,094
Տոկոսային ծախս	11,045	49,047	60,092
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների մարումներ	(46,380)	(88,506)	(134,886)
Վճարված տոկոսներ	(11,045)	(49,047)	(60,092)
Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	74,111	445,507	519,618
հազ. դրամ	Վարձակալության գծով պարտավորություն	Ստացված վարկեր	Ընդամենը
Մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ	74,111	445,507	519,618
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների ավելացումներ (կանխիկ դրամական հոսքեր)	-	80,780	80,780
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների ավելացումներ (անկանխիկ)	9,806	-	9,806
Տոկոսային ծախս	8,446	42,434	50,880
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների մարումներ	(15,933)	(148,789)	(164,722)
Վճարված տոկոսներ	(8,446)	(42,434)	(50,880)
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	67,984	377,498	445,482

23. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2024թ. -ի ապրիլի 8-ին «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի բաժնետերերի և Ընկերության միջև կնքվել է պայմանագիր, որով Ընկերությունը ձեռք է բերել «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի բաժնեմասերի մի մասը՝ 201,823 հազար ՀՀ դրամ արժողությամբ՝ դրանով իսկ իր մասնակցությունը նշված կազմակերպության կապիտալում հասցնելով 40%-ի:

Նույն օրը կնքվել է նաև համաձայնագիր Ընկերության և Էո Շին ՄՊԸ-ի միջև, որով դադարեցվել է վերջիններիս միջև 2022թ. մարտի 4-ին կնքված անշարժ գույք գնելու իրավունքի առուվաճառքի պայմանագիրը, որը ներառում է թվով 9 բնակարանների ձեռքբերում՝ ընդհանուր 259,717 հազար դրամ արժողությամբ: Նշված իրավունքի դիմաց Ընկերությունը 2022թ. ընթացքում Ընկերությունը վճարել էր 201,823 հազար դրամ կանխավճար:

24. Պայմանական դեպքեր

24.1. Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ մարդկանց առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ մարդկանց առողջության հասցված վնասը, որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2. Պայմանական պարտավորություններ և պահուստներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

24.3. Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

24.4. Հարկային պարտավորվածություններ

ՀՀ հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն՝ հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար և սահմանում են

լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվեն շուկայական գներից:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում 200 միլիոն դրամը հարկային տարում:

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերտային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Դեկլարությունը ներդրել է ներքին վերահսկողության համակարգ՝ տրանսֆերային գնագոյացման ընթացիկ օրենսդրության պահանջներին համապատասխանություն ապահովելու համար: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25. Գործարքներ կապակցված կողմերի հետ

25.1. Առևտրային գործարքներ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները.

հազ. դրամ	Շնորհի ստացում		Ծառայությունների մատուցում		Հիմնական միջոցների ձեռքբերում		Պաշարների ձեռքբերում	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Կողմերի հետ փոխկապակցվածությունը								
Բաժնետեր	506,549	1,972,770	2,654	4,414	-	-	-	-
Խորհրդի նախագահ Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	2,675	9,433	-	-	-	-	-	-
	-	-	2,367	2,367	28,038	21,141	137,841	214,155
	<u>509,224</u>	<u>1,982,203</u>	<u>5,021</u>	<u>6,781</u>	<u>28,038</u>	<u>21,141</u>	<u>137,841</u>	<u>214,155</u>

25.2. Առևտրային մնացորդներ

	Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ		Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ	
	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Կողմերի հետ փոխկապակցվածությունը				
Բաժնետեր	13	93	5	5
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	20,688	35,724	2,000	1,045
Ասոցացված ընկերություն	201,823	201,823	-	-
	<u>222,524</u>	<u>237,640</u>	<u>2,005</u>	<u>1,050</u>

25.3. Փոխառություններ

	Տրված փոխառություններ	
	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Կողմերի հետ փոխկապակցվածությունը		
Բաժնետերեր	24,535	23,335
Ասոցացված ընկերություններ	197,854	187,854
	<u>222,389</u>	<u>211,189</u>

25.4. Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	93,780	88,987
	<u>93,780</u>	<u>88,987</u>

26. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Փոխառություններ	45,628	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	207,366	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	182,414	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Ֆինանսական վարձակալություն	67,984	<u>Ընթացիկ</u> Վարկերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր	377,498	<u>Ընթացիկ</u> Վարկերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ

27. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

27.1. Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

27.2. Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որի ընթացքում հայտարարվում են:

27.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

<i>Շենքեր</i>	<i>20-60 տարի</i>
<i>Բժշկական սարքավորումներ և գործիքներ</i>	<i>5 տարի</i>
<i>Կահույք և սարքավորումներ</i>	<i>5 տարի</i>
<i>Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսեր</i>	<i>10 տարի</i>
<i>Տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>

27.4. Հնորհներ

Հնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

- ա) Ընկերությունը կատարելու է շնորհներին հարակից պայմանները, և
- բ) շնորհներն ստացվելու են:

Հիմնական միջոցներին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

27.5. Պաշարներ

Պաշարները՝ դեղեր, բժշկական պարագաներ և այլն, ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման գույք արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջինը մուտք, առաջինը ելք) արժեքի բանաձևով:

Բժշկական ծառայությունների մատուցման մեջ օգտագործվելու նպատակով պահվող դեղերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, քանի որ ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, իրացվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

Դեղերը կամ բժկական պիտույքները, որոնց օգտագործման ժամկետը սպառվել է, կամ այլևս պիտանի չեն օգտագործման այլ հանգամանքներով դուրս են գրվում համապատասխան ժամանակաշրջանում:

27.6. Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվի (կամ միանման ակտիվների խմբի) արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը, սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

27.7. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է:

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

27.8. Հասույթի ճանաչում

27.8.1. Կատարողական պարտականություն էլ հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթը առաջանում է բժշկական ծառայություններից, որոնց գծով հասույթը ճանաչվում է այդ ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում:

27.8.2. Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից ել, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով:

27.9. Շահութահարկ

26.9.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի գույք շահույթի կամ վնասի մեջ:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

26.9.2 Հետաձգված հարկեր

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառվեն մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

27.10. Ֆինանսական ծախսեր

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները: Փոխառության գծով տոկոսները, բացի այն դեպքից, երբ դրանք կապիտալացվում են, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք հաշվեգրվում են:

27.11. Կապակցված կողմերի բացահայտումներ

27.11.1. Կապակցված կողմ

Կողմը կապակցված է Ընկերության հետ, եթե այդ կողմը.

ա/ Ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ մեկ կամ ավելի միջնորդների միջոցով.

- վերահսկում է Ընկերությանը (50% և ավելի մասնակցություն),
- գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ,
- Ընկերությունում ունի մասնակցություն, որը ապահովում է նշանակալի մասնակցություն (20-50% մասնակցություն/բաժնեմաս),
- համատեղ վերահսկողություն է իրականացնում Ընկերության նկատմամբ:

բ/ Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի անդամ են.

- տնօրենը,
- անձիք, որոնք ուղղակիորեն պատասխանատու են Ընկերության գործունեության պլանավորման, ուղղորդման և վերահսկողության համար, (օրինակ՝ Տնօրենների Խորհրդի անդամները):

գ/ Վերոնշյալ անձանց ընտանիքի մտերիմ անդամ է.

- անձի գույքընկերը (ամուսինը),
- անձի երեխաները:

27.11.2. Կապակցված կողմերի գործարքներ

Կապակցված կողմերի հետ գործարքը ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցումն է կապակցված կողմերի միջև՝ անկախ վճարի գանձումից:

Եթե կապակցված կողմերի միջև եղել են գործարքներ, ապա Շնկերությունը բացահայտում է.

- կապակցված կողմի փոխհարաբերության բնույթը,
- գործարքի բնույթը,
- չմարված մնացորդները
 - ժամկետները և պայմանները,
 - ապահովված լինելը,
 - մարման համար վճարվելիք հատուցման բնույթը,
 - տրված կամ ստացված երաշխիքի վերաբերյալ մանրամասները,
 - կասկածելի պարտքերի պահուստները և նրանց գծով ճանաչված ծախսերը:

27.11.3. Առանցքային կառավարչական անձնակազմի գծով բացահայտումներ

Շնկերությունը բացահայտում է առանցքային կառավարչական անձնակազմի.

- հատուցումները՝ կարճաժամկետ կամ հետաշխատանքային,
- ազատման նպաստները,
- մասնակցության վրա հիմնված վճարումները: